

Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի քաղաքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի /ծածկագիր՝ 3.2-1/ համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

13.11.2014

Տիպ՝ [Համայնքային ծառայության թափուր պաշտոններ](#)

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքային համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Մեծամոր համայնքի քաղաքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի թափուր պաշտոն զբաղեցնելու համար (ծածկագիր 3.2-1)

1. Մեծամոր համայնքի քաղաքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետը (ծածկագիր 3.2-1)

- Աշխատակազմի աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

– Ապահովում է քաղաքապետարանում մտից և ելից գրությունների, ինչպես նաև դրանց գրանցման հետ կապված աշխատանքները՝ համապատասխան ծրագրով:

- իրականացնում է քաղաքապետարանում համայնքի ղեկավարի և ավագանու մոտ ընդունելության կազմակերպման համար բնակիչների հերթագրումը

- Ապահովում է աշխատակազմի քարտուղարի **հանձնարարականները**.

– Պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, աշխատակազմի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու լիազորությունները վերազանցելու համար:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) միջնակարգ կրթություն, Հայաստանի Հանրապետության սահմանադրության «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

բ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը

գ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Մրցույթը կկայանա 2014թ. դեկտեմբերի 16-ին ժամը 12:00 –ին Մեծամորի քաղաքապետարանի շենքում:

Փաստաթղթերի ներկայացման վերջին ժամկետն է 01/12/2014թ:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մեծամոր համայնքի քաղաքապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

- դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս)
- տվյալ պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին:
- արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին.
- մեկ լուսանկար 3x4 սմ չափի
- անձնագրի պատճենը

Փաստաթղթերը ընդունում է Մեծամոր համայնքի քաղաքապետարանի աշխատակազմը կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմը

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, քաղաքապետարանի շենք

Հեռ. 0237/34441, Էլ. փոստ՝ metsamormeria@yandex.ru

Հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Աբովյան 71

Հեռ.՝ 0237 /20770

Ժամը 9:00-ից մինչև 17:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: